Տարեց շախմատասերների պնդմամբ, դեռ երբեք Հայաստանի առաջնությունը նման լարված չէր եղել: Միգուցե նրանք ճիշտ են: Ամեն դեպքում, փաստ է, որ հանրապետության բարձրագույն խմբի 59-րդ առաջնության հաղթողը որոշվեց երեկ, ժամը 21-ին: Լրացուցիչ ցուցանիշներով չեմպիոնի կոչումը նվաճեց Կարեն Ասրյանը, որը «Հայոց Աշխարհ»-ին տված հարցազրույցում նշեց՝ հաղթանակը նվիրում է մայրիկին:

ԿԱՐԵՆ ԱՍՐՅԱՆԸ 59-ՐԴ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՉԵՄՊԻՈՆ

ՀԱՂԹԱՆԱԿԸ ՆՎԻՐՈՒՄ ԵՄ ՄԱՅՐԻԿԻՍ

Վերջին՝ 11-րդ տուրում, առաջիններից մեկն ավարտվեց Լեւոն Արոնյանի եւ Սմբատ Լպուտյանի հանդիպումը: Ընդ որում՝ ավարտվեց ոչ-ոքի, ինչը մասամբ էթ ձեռնտու Արոնյանին: Բանն այն է, որ նա վաստակեց 7,5 միավոր, եւ 3-րդ անգամ լրացրեց միջազգային գրոսմայստերի նորման: Ասել է թե՝ ոչ պաշտոնապես ձեւակերպեց պատվավոր տիտղոսը: Իսկ պաշտոնական հաստատումը կստացվի արդեն ՖԻԴԵ-ից: Հաղթանակի դեպքում Արոնյանը կվաստակեր 8 միավոր, եւ անհասանելի կդառնար մրցակիցների համար: Սակայն, նա որոշեց ավելորդ ռիսկի չդիմել:

Այժմ ամեն ինչ կախված էր Կարեն Ասրյանից. Արա Մինասյանին հաղթելու դեպքում նա նույնպես 7,5 միավոր կունենար, եւ լրացուցիչ ցուցանիշներով առաջին տեղում կշրջանցեր Արոնյանին: Հենց այս պարտիան էլ, ինչպես նշեցինք, ավարտվեց նախավերջինը: Վերջնամասում Կարենը կարող էր ավելի արագ հասնել նպաստավոր արդյունքի: Սակայն, մի քանի ոչ ճիշտ քայլեր կատարեց: Մի պահ թվում էր, թե իանդիպումը ոչ-ոքի կավարտվի: Բայց՝ երիտասարդ գրոսմայստերը մտքի փայլուն ճկունություն դրսեւորեց վերջին քայլերը կատարելիս եւ հասավ այնքան փափագած հաղթանակին:

Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում Ասրյան-Մինասյան պարտիան:

1. e4 c5 2. Df3 d6 3. d4 cxd 4. Dd4 Df6 5. Dc3 a6 6. Фe2 e5 7. Db3 Фe7 8. 0-0 Фe6 9. f4 Թe7 10. f5 Фe4 11.a4 Dbd7 12. a5 h6 13. Фe3 0-0 14. Uh1 Նfc8 15. Фe4 Թe4 16. Թf3 Թc6 17. g4 Dh7 18. Dc1 Фg5 19. Dd1 Фe3 20. Թe3 Ddf6 21. Նg1 d5 22. Db4 Թd6 23. Dd5 Dd8 24. Dd6 Նc2 25. Նad1 Նe8 26. h4 Թg5 27. Թc5 Նc5 28.g5 hxg 29. hxg g6 30. f6 Նc2 31. b4 Uh8 32. De7 Նc4 33. Նg4 Նd4 34. Նd4 exd 35. Ug2 Նd8 36. Uf2 d3 37. Dd5 Նe8 38. Ue3 Նe5 39. Ud3 Նg8 40. Նg5 Dg8 41. e5 De6 42. Ue4 Ug8 43. De7+ Uf8 44. Dc8 Dd8 45. Dd6 Dc6 46. Db7 Db4 47. Dc5 Ue8 48. Ud4 g5 49. Ue4 Dc6 50. Ud8 g4 51. Uc6 g3 52. De6 g2 53. De7+ սեւերը հանձնվեցին:

3-րդ տեղի ճակատագիրը որոշվեց Արտաշես Մինասյան-Աշոտ Նադանյան պարտիայում, որն ամենավերջինն ավարտվեց: Մինասյանը հաղթեց եւ 7 միավորով եզրափակեց լավագույն եռյակը:

8 տուր չարունակ առանց պարտության ընթացող Գաբրիել Սարգսյանը սկզբունքային մրցավեճում սեւերով պարտվեց Արսեն Եղիազարյանին: Մրցաշարային աղյուսակում մրցանակային տեղ զբաղեցնելու առումով ոչինչ չորոշող պարտիաներում Անդրանիկ Մատիկոզյանը շատ արագ խաղաղ դաշն կնքեց Մելիքսեթ Խաչիյանի հետ, իսկ Վարուժան Հակոբյանը հաղթեց՝ Տիգրան Նալբանդյանին:

Այսպիսով՝ մրցաշարային աղյուսակը վերջնական տեսք ընդունեց.

Կարեն Ասրյան 7,5 միավոր, Լեւոն Արոնյան՝ 7,5, Արտաշես Մինասյան՝ 7, Արսեն Եղիազարյան՝ 6,5, Գաբրիել Սարգսյան՝ 6, Արա Մինասյան՝ 5,5, Աշոտ Նադանյան եւ Տիգրան Նալբանդյան՝ 5-ական, Սմբատ Լպուտյան եւ Վարուժան Հակոբյան՝ 4,5-ական, Մելիքսեթ Խաչիյան եւ Անդրանիկ Մատիկոզյան՝ 3,5-ական:

Առաջնության մասին մեր խնդրանքով իր կարծիքը հայտնեց Հայաստանի շախմատային ֆեդերացիայի նախագահ, ՖԻԴԵ-ի փոխնախագահ, ակադեմիկոս **ՎԱՆԻԿ ՋԱՔԱՐՅԱՆԸ.**

-Մրցաշարն անցավ շատ հետաքրքիր եւ լարված պայքարում: Ընդ որում, կրտսեր սերնդի ներկայացուցիչները կարողացան գերազանցել ավելի փորձառու ավագ մրցակիցներին: Ճիշտ է, Սմբատ Լպուտյանը վատ մարզավիճակում էր, իսկ Արտաշես Մինասյանն էլ որոշ վրիպումներ թույլ տվեց: Առաջնությունը մեկ անգամ եւս ապացուցեց, որ արժանի հերթափոխ ունենք: Դրանում կարող եք համոզվել՝ կրկին վերլուծելով Ասրյանի, Արոնյանի եւ Սարգսյանի պարտիաները:

Ինչպես գիտեք, Արոնյանը 3-րդ անգամ լրացրեց միջազգային գրոսմայստերի նորման, ինչն, անշուշտ, ուրախացնում է: Ասեմ, որ հաղթողն ու մրցանակակիրները Հայաստանի առաջնության պատմության մեջ առաջին անգամ կպարգեւատրվեն ոսկե, արծաթե եւ բրոնզե մեդալներով: Ինչպես գիտեք, Հայաստանի չեմպիոնը համալրելու է ազգային հավաքականի 5-րդ թափուր տեղը: Մտահոգում է այն, որ Ասրյանը մեծերի մրցումներում հանդես գալու մրցափորձի պակաս ունի: Մինչդեռ Հայաստանի ազգային հավաքականը նոյեմբերի 27-ից դեկտեմբերի 8-ը մասնակցելու է Բաթումում կայանալիք Եվրոպայի թիմային առաջնությանը:

-Ի՞նչն էր պատճառը, որ առաջնությանը չմասնակցեցին մեր փորձառու շախմատիստները:

-Վլադիմիր Հակոբյանը փոքր-ինչ հոգնած էր Լաս Վեգասում կայացած աշխարհի առաջնության լարված եզրափակիչից հետո, եւ ցանկացավ ուժերը վերականգնել Եվրոպայի առաջնությունից առաջ: Ռաֆայել Վահանյանը հանրապետությունից բացակայում է, իսկ ինչ մնում է Աշոտ Անաստասյանին, ապա նա հայտարարեց, թե չի ուզում հանդես գալ Հայաստանի հավաքականում: Որոշումը պատճառաբանում է, որ խաղամակարդակով արժանի է հավաքականում լինել, առանց ընտրական մրցումների մասնակցելու: Մինչդեռ այս առաջնությունը նրա համար ընտրական բնույթ էր կրելու, քանզի միայն հաղթելու դեպքում հանդես կգար ազգային թիմի կազմում: Որոշ առումով նա ճշմարտացի է, քանզի զգալիորեն ուժեղ է: Սակայն գործակիցոգ զիջում է: Համաձայն եմ նրա հետ, որ վճռորոշը խաղամակարդակն է, եւ ոչ թե թվերը: Սակայն կարգը՝ կարգ է:

Իսկ այժմ ՅՅ հավաքականում կընդգրկվեն Վլադիմիր Հակոբյանը, Ռաֆայել Վահանյանը, Սմբատ Լպուտյանը, Արտաշես Մինասյանը եւ Կարեն Ասրյանը:

Առաջնության ավարտից անմիջապես հետո Հայաստանի չեմպիոնի կոչումը նվաճած **ԿԱՐԵՆ ԱՍՐՅԱՆԸ** համաձայնեց բացառիկ հարցազրույց տալ «Հայոց Աշխարհ»-ին:

-Կարեն, նախ շնորհավորում եմ հաղթանակի կապակցությամբ: Այս պահին կարո՞ղ ես վերլուծել ելույթդ հանրապետության առաջնությունում:

-Այնքան էլ հաջող չմեկնարկեցի, փոքր-ինչ ծանր էի խաղում: Այդ ընթացքում մի քանի ցավալի վրիպումներ թույլ տվեցի եւ միավորների կորուստից չխուսափեցի: Լավ է որ վերջում կարողացա հունի մեջ մտնել եւ, ի վերջո, դժվարին հաղթանակ տարա:

-Դեռեւս մի քանի տուր առաջ անհնար էր որոշել ապագա հաղթողին:

-Իրոք, առաջնությունում շատ անսպասելի արդյունքներ գրանցվեցին: Ուրախ եմ, որ երիտասարդ շախմատիստները՝ Վարուժան Հակոբյանը, Գաբրիել Սարգսյանը եւ իհարկե Լեւոն Արոնյանը կարողացան հաջողությամբ մրցել փորձառու գրոսմայստերների հետ: Կարծում եմ, մոտ ապագայում նրանք կհամալրեն Հայաստանի ազգային հավաքականը:

-Դու արդեն հավաքականում ես եւ մասնակցելու ես Եվրոպայի առաջնությանը: Պատասխանատվության բեռ չե՞ս զգում:

-Հայաստանի հավաքականում արդեն հանդես եմ եկել եւ մասնակցել շախմատի համաշխարհային օլիմպիադային: Անշուշտ, պատասխանատվությունը բավական մեծ է, քանզի այստեղ մենակ չես եւ քո խաղի արդյունքից կախված է թիմի ճակատագիրը: Թիմային պայքարն առանձնահատկություն ունի: Հաճախ անձնական շահերը պետք է հետին պլան մղես՝ հանուն հավաքականի: Այստեղ լինում են դեպքեր, երբ ստիպված ես այնպիսի պարտիաներ խաղալ, որ այլ ժամանակ մտքովդ էլ չի անցնի:

-Նպատակդ Հայաստանի չեմպիոն դառնա՞լն էր:

-Անկեղծ ասած՝ ո՛չ: Ուղղակի նպատակադրվել էի լավ խաղալ: Մրցումներից առաջ երբեք չեմ մտածում բարձր տեղերի մասին, թեեւ, իհարկե, սրտիս խորքում նման հույս փայփայում եմ: Ինձ թվում է նույն հաջողությամբ առաջնության հաղթող կարող էին դառնալ Լ.Արոնյանը կամ Արտ.Մինասյանը:

-Վերջին պարտիայիդ ավարտից հետո շատ շախմատասերներ ասում էին, թե ֆանտաստիկ հաղթանակ էր: Համամի՞տ ես նրանց հետ:

-Չէի ասի, ապարզապես գեղեցիկ խաղացի: Ինձ թվում է ավելի շուտ կարող էի նպաստավոր արդյունքով ավարտել հանդիպումը, սակայն զգացել տվեց հուզմունքը եւ լարվածությունը: Ամեն դեպքում, հաղթանակս օրինաչափ է, որովհետեւ լավ խաղացի:

-Ո՞ւմ ես նվիրում հաղթանակդ:

-Մայրիկիս: Հենց նա է 4 տարեկանում ինձ մտերմացրել շախմատի հետ եւ միշտ ցավում է ինձ համար: Սկզբում մայրս զբաղվում էր ավագ եղբորս՝ Մուրադի հետ, հետո ինձ էլ հետաքրքրեց այս խաղը: Շուտով սկսեցի հաղթել եղբորս: Նա տեսնելով, որ պարտվում է ինձ, որոշեց այլեւս շախմատ չխաղալ:

-Որո՞նք են հետագա պլաններդ:

-Վաղը մեկնելու եմ Սանկտ Պետերբուրգ՝ մասնակցելու «Ռուսաստանի գավաթ» անունը կրող բաց մրցաշարին: Այժմ ընթացիկ գործակիցս 2590-ին մոտ է, եթե 10 կետով բարելավեմ այն, ապա միանգամից իրավունք կստանամ մասնակցել աշխարհի առաջնությանը: Ի դեպ, Հայաստանի առաջնությունում գործակիցս 12 կետով բարձրացավ:

-Ի՞նչ է քեզ համար շախմատը:

-Դա միակ բանն է, որ ինձ մոտ լավ է ստացվում: